ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2024Թ. ՓԵՏՐՎԱՐԻ 28-ԻՑ 29-Ը Ք. ՏԱՇՔԵՆԴ (ՈՒԶԲԵԿՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ) ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1. Անունը, ազգանունը՝

- Նարինե Ֆահրադյան
- Աննա Պողոսյան

2. Զբաղեցրած պաշտոնը՝

- ՀՀ ՊԵԿ Միջազգային համագործակցության վարչության հարկային համագործակցության բաժնի պետի ժ/պ,
- ՀՀ ՊԵԿ Տեղեկատվական համակարգերի փոփոխությունների կառավարման և ազդեցությունների գնահատման բաժնի գլխավոր հարկային տեսուչ:

3. Գործուղման վայրը և ժամկետները՝

Ուզբեկստանի Հանրապետություն, ք. Տաշքենդ, փետրվարի 27-ից մարտի 1-ը:

4. Հրավիրող կողմը՝

Ուզբեկստանի Հանրապետության նախարարների գրասենյակին առընթեր հարկային կոմիտեն, Միջազգային հարկման և ներդրումների կենտրոնի (ICTI - Վաշինգտոն, ԱՄՆ) հետ համատեղ:

5. Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը)՝

Գործուղման նպատակն էր «Մետաքսի ճանապարհ» հարկային համաժողովի 16-րդ տարեկան նիստին մասնակցությունը: Համաժողովի ընթացքում տարածաշրջանային հարկային մարմինների ներկայացուցիչների և մի շարք հայտնի միջազգային փորձագետների և մասնագետների կողմից ներկայացվել է Մետաքսի ճանապարհի տարածաշրջանն ընդգրկող երկրներին հետաքրքրող առանցքային մի շարք թեմաներ: Անդրադարձ է կատարվել Ոզբեկստանի հարկային որոշ համակարգերի, մասնավորապես՝ քեշբեք, ռիսկերի կառավարման, ավտոմատ կամերալ, ապրանքների

դրոշմավորման համակարգերը, ներկայացվել է նաև թվային դրոշմավորման համակարգը:

6. Քննարկված թեմաները՝

Ս/թ փետրվարի 28-ից 29-ը կայացած «Մետաքսի ճանապարհ» հարկային համաժողովի 16-րդ տարեկան նիստի ընթացքում քննարկվել են մի շարք հարցեր, այդ թվում.

1. Տարածաշրջանային տնտեսական զարգացումները և աճի առաջնահերթությունները՝ ներառյալ Թվային տնտեսության ոլորտը,
2. Ուղղակի և անուղակի հարկերի քաղաքականությանն ու վարչարարությանն առնչվող հարցեր,
3. Զարգացման համար նպաստավոր հարկային միջավայրի ստեղծումը՝ քննարկում «Մեկ գոտի՝ մեկ ճանապարհ» հարկային մարմինների համագործակցության մեխանիզմի (BRITACOM) կողմից իրականացվող գործունեության շուրջ,
4. Մետաքսի ճանապարհի տարածաշրջանն ընդգրկող երկրների միջև արդյունավետ ադրսահմանային համագործակցության հաստատումը ՝ տեխնոլոգիայի միջոցով մաքսային վճարների և ակցիզային հարկերի վարչարարության իրականացմամբ,
5. Թվային տնտեսության մեջ ԱԱՀ քաղաքականության և հարկային ընթացակարգերի կիրառումը,
6. Առևտրի և ներդրումների համար հարկային միջավայրի բարելավման Չինական առաջավոր փորձը,
7. Ներքին ռեսուրսների մոբիլիզացման և միջազգային հարկային համագործակցության նոր և առաջնահերթ ոլորտները:

7. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը՝

Միջացառման ժամանակ որպես զեկուցողներ հանդես են եկել Մետաքսի ճանապարհի տարածաշրջանն ընդգրկող երկրների մի շարք բարձրաստիճան ներկայացուցիչներ, Միջազգային հարկման և ներդրումների կենտրոնի նախագահը և Մեծ քառյակ աուդիտորական ընկերությունների ներկայացուցիչները: Առավել արժեքավոր էր Ուզբեկստանի հարկային ժամանակակից համակարգերի քննարկումը, մասնավորապես՝

քեշբեք, ռիսկերի կառավարման, ավտոմատ կամերալ, ինչպես նաև ապրանքների դրոշմավորման համակարգերի շուրջ:

Համաժողովի ընթացում նշվեց, որ հսկիչ դրամարկղային մեքենաների կիրառության, ինչպես նաև կտրոնների տրամադրման ապահովման համար Ուզբեկստանում ներդրվել է քեշբեք համակարգը: Վերջինիս համար ստեղծվել է բջջային հավելված, որի միջոցով ֆիզիկական անձինք իրենց կողմից իրականացված առևտրի դիմաց ՀԴՄ կտրոնների հիման վրա ստանում են 1% քեշբեք: ՀԴՄ կտրոնների վրա տպագրվում է QR կոդ, որի սկանավորման միջոցով ֆիզիկական անձը բջջային հավելվածի անձնական էջում հավաքագրում է կտրոնները: Այն դեպքում, երբ հնարավոր չի իրականացնել QR կոդի սկանավորում, ապա ֆիզիկական անձը հնարավորություն ունի բջջային հավելվածում տվյալ կտրոնը գրանցել՝ մուտքագրելով տվյալ ՀԴՄ կտրոնի «կտրոնի համարը» և «ֆիսկալային համարը»:

Մեծ քառյակ աուդիտորական ընկերությունների ներկայացուցիչների կողմից ներկայացվեց նաև տարածաշրջանային երկրների հարկային համակարգերի և նորարարությունների վերլուծությունները և արձանագրած առաջընթացները:

8. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը՝

Հանդիպման արդյունքում պայմանավորվածություն է ձեռք բերվել շարունակել համագործակցությունը նման ձևաչափով և հաջորդ տարի ևս նախատեսել «Մետաքսի ճանապարհ» հարկային համաժողովի 17-րդ տարեկան նիստին մասնակցությունը: Հանդիպման արդյունքում որոշումներ չեն կայացվել և փաստաթղթեր չեն ստորագրվել:

9. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները՝

Միջոցառմանը մասնակցելը թույլ տվեց ՊԵԿ ներկայացուցիչներին ներգրավվել միջազգային հարկային համագործակցության նոր և առաջնահերթ ոլորտների վերաբերյալ ռազմավարական երկխոսություններին, դրանցում ներկայացնել Հայաստանի փորձը և գործընկերային հարաբերություններ հաստատել գործընկեր ենթադատությունների ներկայացուցիչների հետ: Համաժողովը հնարավորություն

ընձեռեց ծանոթանալու ժամանակակից թվային դարաշրջանում հարկման արդի մոդելների ներդրման առկա մարտահրավերներին և առաջարկվող լուծումներին:

10. Ստորագրությունը, ամսաթիվը

Նարինե Ֆահրադյան

Աննա Պողոսյան

05.03.2024թ"